

## Հավելված T1: Վերաբացման Արձանագրությունները K-12 Դպրոցների Համար

**Վերջին Թարմացումները՝ (Փոփոխությունները նշված են դեղին գույնով):**

**2/18/21**

- Նկարագրում է փակ տարածքներում աշակերտների համար թույլատրվող գործողություններն այն դեպքում, եթե COVID-19-ով վարակման դեպքերի գնահատման օրական ցուցանիշը ավելի քիչ է, քան 25 դեպք 100,000 բնակչության հաշվով՝ ներառելով լրիվ դասարանային ուսուցում TK-6 դասարանների աշակերտների համար:

**2/11/21**

- Թարմացվել է դպրոցների վերաբացման շեմը՝ համապատասխանելու [Նահանգային Համախմբված Շրջանակին և Ուղեցույցին](#):
- Պարզաբանվել է, որ դպրոցները պետք է շարունակեն հեռավար ուսուցման համար այլընտրանքային տարբերակներ առաջարկել այն աշակերտներին, որոնք նախընտրում են հեռավար ուսուցումը:
- Վերանայվել է փոքր, հաստատուն խմբերի առավելագույն չափը՝ մինչև 14 աշակերտներ և երկու վերահսկող մեծահասակներ:
- Ներառվել է տեղեկատվություն փոքր, հաստատուն խմբերում փոխարինող ուսուցիչների և արագ փոխարինման անձանց (floaters) մասին և պարզաբանվել է, որ վերահսկող անձնակազմը կարող է աշխատել առավելագույնը երկու տարբեր խմբերի հետ:
- Այն աշակերտները, որոնք վերադառնում են լրիվ (առկա), դեմ առ դեմ ուսուցմանը TK-2 դպրոցների դասարաններում՝ հաստատված թույլտվությամբ, պետք է նշանակվեն հաստատուն խմբերում, սակայն չեն սահմանափակվելու առավելագույնը 14 աշակերտով: Հաստատուն խմբում ուսանողների առավելագույն քանակը կախված է առկա ուսումնական տարածքում ուսանողների և անձնակազմի անդամների միջև պատշաճ ֆիզիկական հեռավորության պահպանումից:
- Տրամադրվել է թարմացված հղում COVID-19-ով վարակված անձանց և նրանց կոնտակտավորների մասին Հանրային Առողջապահության Վարչությանն առցանց գեկուցման համար:
- Տրամադրվել է COVID-19-ի թեստ հանձնելու նոր ուղեցույց և տեղեկատվություն՝ առկա նահանգային ռեսուրսների վերաբերյալ:
- Պարզաբանվել է, որ շարունակվում է խստորեն խորհուրդ տրվել բոլոր աշակերտների և անձնակազմի անդամների միջև նվազագույնը 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանումը, և անհրաժեշտ է կիրառել համապատասխան ֆիզիկական պատնեշներ, երբ հնարավոր չէ պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն,

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է գիտական և հանրային առողջապահության փորձի վրա հիմնված փուլային մոտեցում՝ թույլատրելու մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի աշակերտների համար դպրոցական ծառայությունների ապահով վերաբացումը: Ի հավելումն Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի և Կալիֆորնիայի Կրթության Վարչության կողմից դպրոցին ներկայացված պայմանների՝ դպրոցները պետք է հետևեն նաև աշխատակիցների և աշակերտների անվտանգության և վարակի վերահսկման սույն արձանագրություններին:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել նոր տեղեկությունների և աղբյուրների հասանելի դառնալու դեպքում: Այցելեք <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> այս փաստաթղթի թարմացումներին ծանոթանալու համար:

Այս փաստաթուղթը սկսվում է Լոս Անջելեսի Շրջանում դպրոցական կրթության ներկա դրույթների քննարկումով, որին հաջորդում են դպրոցի միջավայրին հատուկ անվտանգության ռազմավարությունների վերաբերյալ տեղեկությունները:

TK-12-ի վերաբացման ցանկը սկսվում է Էջ 4-ից և նախատեսում է անվտանգության միջոցառումներ հինգ ոլորտներում՝

- (1) Աշխատավայրին հատուկ գործունեության ծրագրեր ու գործելակերպ՝ պաշտպանելու աշխատակցի և աշակերտի առողջությունը
- (2) Ֆիզիկական հեռավորություն պահպանելու միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկման միջոցառումներ
- (4) Հաղորդակցություն աշխատակիցների, աշակերտների և աշակերտների ընտանիքների և հանրության հետ
- (5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիություն ապահովող միջոցառումներ

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է իրագործվեն, եթե ձեր հաստատությունը մշակում է ցանկացած վերաբացման արձանագրություն: Դպրոցները պետք է իրականացնեն ստորև թվարկված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու չիրագործված որևէ միջոցառում կիրառելի չէ տվյալ հաստատության համար:

**Հատուկ ուղեցույց TK-12 հաստատության համար**

**Երբ COVID-19-ով Վարակման Դեպքերի Չնահատման Օրական Ցուցանիշը Գերազանցում է 25 Դեպքը 100,000 Բնակչության Հաշվով՝**

Լոս Անջելեսի Շրջանում TK-12 դպրոցները կարող են բացվել հեռավար ուսուցման համար: Կալիֆորնիայի դպրոցները չեն կարող վերաբացվել լրիվ դասարանային ուսուցման համար 7-12 դասարաններում, եթե շրջանը գտնվում է 1-ին Կարգում (Purple Widespread): TK-6 դասարանների աշակերտներին սպասարկող դպրոցները չեն կարող վերաբացվել լրիվ դասարանային ուսուցման համար այն շրջաններում, որտեղ ամենօրյա դեպքերի զննահատման ցուցանիշը 25-ից բարձր է 100,000 բնակչի համար: Անկախ նշված բացառություններից՝ Լոս Անջելեսի շրջանի TK-12 դպրոցները կարող են բացվել միայն հեռավար ուսուցման համար: Այս ժամանակահատվածում աշխատակիցները և անձնակազմը՝ ինչպես սահմանված է ստորև, կարող են աշխատանքի համար զեկուցել դպրոցին, որպեսզի աշակցեն կարևոր գործողություններին, հեռավար ուսուցման կիրառմանը կամ իրականացնել դպրոցում աշակերտներին ծառայություններ մատուցելու կամ ուսուցման համար թույլատրված բացառությունները: Այն դպրոցները, որոնք առաջարկում են դպրոցի տարածքում ուսուցման հնարավորություն, պետք է շարունակեն առաջարկել նաև 100% հեռավար ուսուցման հնարավորություն այն ընտանիքներին, որոնք նախընտրում են այդ տարբերակը: Դպրոցի տարածքում աշակերտներին թույլատրվող զբաղմունքներն են՝

- **Դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքի և/կամ դպրոցներում երեխաների խնամքի ծրագրեր:**
  - LEA-ները և դպրոցները, որոնք առաջարկում են երեխաների համար ցերեկային խնամքի ծառայություններ, պետք է համապատասխանեն Հանրային Առողջապահության Վարչության [Դպրոցահասակ երեխաներին Ցերեկային խնամք Տրամադրող Ծրագրերին](#) կամ [ECE](#)

[Տրամադրողների Ուղեցույցին](#): Ծրագրերը, որոնք ցանկանում են դպրոցահասակ երեխաներին դպրոցում ցերեկային խնամք տրամադրել, պետք է հաղորդակցվեն իրենց Համայնքային Խնամքի Լիցենզավորող [Տարածքային Գրասենյակի](#) հետ՝ հարցում անելու երեխաների խնամքի լիցենզավորված հաստատությունների և COVID-19-ի պատճառով լիցենզիայից զրկված մատակարարների համար մերժման առկայության մասին: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս [PIN 20-22-CCP](#)

- Դպրոցները, որոնք դպրոցի տարածքում տրամադրում են երեխաների ցերեկային խնամքի ծառայություններ, Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը պետք է ներկայացնեն [K-12 Դպրոցների Տարածքում Դպրոցահասակ Երեխաների Ցերեկային Խնամքի Ծառայությունների](#) մասին տեղեկանք:

• **Մասնագիտացված ծառայություններ անհատական ծառայությունների և աջակցության կարիք ունեցող երեխաների ենթախմբերի համար:**

- LEA-ներից և դպրոցներից չի պահանջվում տրամադրել մասնագիտացված, անհատական ծառայություններ, սակայն նրանք, որոնք տրամադրում են այդ ծառայությունները, կարող են սպասարկել IEP-ներ ունեցող երեխաներին, Անգլերեն սովորող երեխաներին և այն բոլոր կարիք ունեցող աշակերտներին, որոնց կարիքները չեն կարող բավարարվել վիրտուալ հարթակների հրահանգների միջոցով: Այս աշակերտներին կարելի է մատուցել անհրաժեշտ ծառայություններ այն պայմանով, որ տեղում միաժամանակ ներկա աշակերտների ընդհանուր թիվը չզերազանցի աշակերտների ընդհանուր քանակի 25%-ը: Այս 25%-ի կանոնից բացառություն են կազմում այն դպրոցները, որոնք ստացել են TK-2 դասարանների աշակերտներին անհատական ուսուցման վերադարձնելու թույլտվություն: Մուտքի թույլտվություն ստացած դպրոցներին թույլ է տրվում դպրոց վերադարձնել TK-2 դասարանների բոլոր աշակերտներին՝ ներառյալ այդ դասարանների բարձր կարիք ունեցող աշակերտներին: Այդ դեպքում, մասնագիտացված ծառայությունների մատուցման և գնահատման համար դպրոցը կարող է հաստատության տարածք բերել հավելյալ աշակերտներ՝ 3-րդ և բարձր դասարաններում ցուցակագրված աշակերտների մինչև 25%-ը, եթե դպրոցը կարող է պահպանել հեռավորության, վարակի վերահսկման և համախմբման պահանջները:
- Մասնագիտացված ծառայությունները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում միայն մասնագիտական թերապիայի, խոսքի և լեզվի, այլ բժշկական ծառայություններով, վարքային, կրթական աջակցության ծառայություններով՝ որպես նպատակային միջամտության ռազմավարության մաս, կամ գնահատումներով, ինչպիսիք են՝ Անգլերեն սովորող աշակերտի կարգավիճակի գնահատումը, Անհատականացված Կրթական Ծրագրերի գնահատումը և այլ անհրաժեշտ գնահատումները:
- Ոչ մի երեխա չի կարող լինել մեկից ավելի խմբի անդամ: Խմբի մաս կազմող աշակերտները կարող են դուրս գալ խմբից՝ լրացուցիչ ծառայություններ ստանալու համար: Ցանկացած լրացուցիչ ծառայություն, այնուամենայնիվ, պետք է տրամադրվի համապատասխան մասնագետի կողմից անհատապես, ապահով տարածքում, որն առանձնացված է մյուս բոլոր անձանցից:
- Դպրոցները պետք է համաձայնվեն համագործակցել Հանրային Առողջապահության Վարչության հետ՝ ստուգումների, վերահսկման և փաստաթղթավորման հարցերով, ինչը կպահանջվի վարակի տարածման այս սկզբնական փուլի հետ կապված առողջապահական արդյունքների մանրակրկիտ ստուգումների նպատակով:
- Տվյալ խմբում սովորող աշակերտների հատուկ կարիքների համապատասխանության չափով խիստորեն խրախուսվում է բացօթյա տարածքներից օգտվելը դպրոցական օրվա առնվազն 50% -ի ընթացքում:

- LEA-ները և դպրոցները, որոնք որոշում են դպրոցում կիրառել այս ծառայությունները հատուկ կարիք ունեցող աշակերտների համար, պետք է իրենց ծրագրերի մասին տեղեկացնեն Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը: Եթե դպրոցը արդեն ստացել է TK-2 դպրոցների աշակերտների համար վերաբացման թույլտվություն, ապա պետք է ծանուցի դպրոցում սովորող հատուկ կարիք ունեցող աշակերտներին մատուցվող ծառայությունների մասին, եթե մտադրված է այդ աշակերտներին վերադարձնել հաստատություն՝ զուգահեռ TK-2 դասարանների աշակերտներին: Տեղեկանքի ձևաթուղթը կարող եք գտնել այստեղ՝ [Փոքր Խմբերի Ուսուցման Մասին Ծանուցման Ձևաթուղթ](#):
- Նահանգի Մասնագիտացված ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ [Մասնագիտացված Աջակցություն և Ծառայություններ](#):
- **Քոլեջի ընդունելության թեստերի՝ ներառյալ PSAT, ACT և SAT քննությունների Վերահսկում:**
  - Քոլեջի ընդունելության թեստերը՝ ներառյալ PSAT, ACT և SAT քննությունները, կարող են անցկացվել դպրոցներում, եթե գնահատման ամբողջ ընթացքում աշակերտները պատշաճ կերպով համախմբված լինեն (ոչ ավել, քան 14 աշակերտ յուրաքանչյուր դասասենյակում՝ աշակերտների և աշակերտների ու ուսուցիչների միջև առնվազն 6 ոտնաչափ հեռավորության պահպանմամբ):
  - Բոլոր աշակերտները և անձնակազմի բոլոր անդամները պետք է կրեն **դիմակներ** դպրոցում գտնվելու ամբողջ ընթացքում, պետք է կիրառվեն վարակի վերահսկման հրահանգները:
  - Դպրոց ժամանման և դպրոցից դուրս գալու պահին կամ թեստերի ընդմիջումների ժամերին չպետք է լինեն կուտակումներ:
- **TK-6 դասարանների երեխաների համար տեղում ուսուցման կազմակերպում այն դպրոցների կողմից, որոնք բացվել են լրիվ դասարանային ուսուցման համար ցանկացած պահի, երբ վարակման դեպքերի գնահատման ցուցանիշը ավելի քիչ էր, քան 25 դեպքը 100,000 բնակչության հաշվով:**
  - Ցանկացած դպրոց, որը հաստատվել է Նահանգի Ապահով Դպրոցների կողմից Բոլոր Թիմերի և Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության (LACDPH) համար՝ անկախ այն հանգամանքից, թե դա տեղի է ունեցել տարրական դպրոցների առկա թույլտվության ավտոմատ կերպով երկարացման, թե COVID-19-ի Անվտանգության Ծրագրի ներկայացման և վերանայման գործընթացի միջոցով, և փաստորեն բացվել է TK-6-րդ դասարանի աշակերտների լրիվ դասարանային ուսուցման համար, երբ վարակման դեպքերի գնահատման օրական ցուցանիշը քիչ էր 25 դեպքից 100,000 բնակչության հաշվով, կարող է շարունակել բաց մնալ TK-6 դասարանների համար՝ անգամ եթե վարակման դեպքերի ցուցանիշը հետագայում կրկին բարձրանա 25-ից ավել դեպք 100,000 բնակչության հաշվով:
  - TK-6 դասարանների աշակերտները, որոնք վերադառնում են ընդհանուր, դասարանային ուսուցման, պետք է նշանակվեն հաստատուն խմբերում, որոնք ունեն ուսանողների կայուն անդամագրություն և ամենօրյա ուսուցիչներ և չեն խառնվում այլ հաստատուն խմբերին: Այդ հաստատուն խմբերի չափը չի սահմանափակվում առավելագույն հստակ թվով, սակայն կախված է դասասենյակների հասանելի տարածքների օգտագործումից՝ այնպես, որ թույլատրվի պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն աշակերտների և անձնակազմի անդամների միջև:

**Երբ COVID-19-ով վարակման դեպքերի գնահատման Օրական Ցուցանիշը Առնվազն 5 օր շարունակ ավելի քիչ է եղել 25 դեպքից 100,000 բնակչության հաշվով՝**

- Դպրոցները կարող են լրիվ բացվել TK-6 դասարանների աշակերտների համար դասարանային

անհատական ուսուցման համար, երբ վարակման դեպքերի գնահատման օրական ցուցանիշը 5 օր շարունակ ավելի քիչ է եղել 25 դեպքից 100,000 բնակչության հաշվով, և դպրոցը հետևել է բացման համար նախատեսված նահանգի և շրջանի բոլոր պահանջներին:

- TK-6 դասարանների աշակերտները, ովքեր վերադառնում են ընդհանուր դասարանային ուսուցմանը, պետք է նշանակվեն հաստատուն խմբերում, որոնցում պահպանվում է աշակերտների և ուսուցիչների ամենօրյա կայուն անդամակցությունը, և չեն միախառնվում այլ հաստատուն խմբերին: Այդ հաստատուն խմբերի չափը չի սահմանափակվում առավելագույն հստակ թվով, սակայն կախված է դասասենյակների հասանելի տարածքների օգտագործումից՝ այնպես, որ թույլատրվի պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն աշակերտների և անձնակազմի անդամների միջև:
- Աշակերտներին տրամադրվող մյուս ծառայությունները, որոնք նկարագրված են վերևում, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքը և/կամ երեխաների խնամքի ծրագրերը, երեխաների սահմանված ենթախմբերին մատուցվող մասնագիտացված ծառայությունները, և համալսարանի / քոլեջի ընդունելության թեստեր հանձնելու վերահսկումը թույլատրվում է նաև այն դեպքում, երբ վարակման դեպքերի գնահատման օրական ցուցանիշը ավելի քիչ է 25 դեպքից 100,000 բնակչի հաշվով՝ յուրաքանչյուր ծառայության համար հաշվի առնելով վերևում նկարագրված նույն պարամետրերը և սահմանափակումները:

Պետք է պահպանվեն TK-12 Դպրոցների Վերաբացման համար սույն արձանագրությամբ սահմանված և K-12-ում Վարակի Կառավարմանը վերաբերող արձանագրությամբ սահմանված աշխատակիցների և աշակերտների անվտանգության ապահովման բոլոր միջոցառումները, որոնք պետք է կիրառելի լինեն տեղում գտնվող ամբողջ անձնակազմի, ինչպես նաև մասնագիտացված ծառայություններ մատուցողների համար: Հաջորդ պարբերությունները կարևորում են դպրոցի միջավայրին հատուկ անվտանգության ռազմավարությունները: K-12 դպրոցների համար նախատեսված լրացուցիչ ռեսուրսները կարելի է գտնել [TK-12 Դպրոցներում COVID-19-ի Գործիքակազմում](#):

## ԽՄԲԱՎՈՐՈՒՄ

Տեղում ծրագիր կազմելու երեք տարբերակների դեպքում, որոնք թույլատրվում են բոլոր դպրոցներում (ցերեկային խնամք դպրոցահասակ երեխաների համար, մասնագիտացված ծառայություններ երեխաների որոշված ենթախմբերի համար և քոլեջի ընդունելության համար թեստեր հանձնելու վերահսկում), աշակերտները պետք է կազմակերպվեն և շարունակվեն օրվա ընթացքում գտնվել փոքր խմբերում, որոնք պետք է սահմանվեն որպես հաստատուն խմբեր՝ ոչ ավել, քան 14 երեխաներով և երիտասարդներով, և ոչ ավել, քան երկու վերահսկող չափահաս անձանցով՝ վերահսկվող միջավայրում, որտեղ վերահսկող մեծահասակները և երեխաները միասին են լինում բոլոր գործողությունների իրականացման ընթացքում (օր.՝ ուսուցիչ կամ հանգիստի ժամին և այլն), և հաստատության տարածքում խուսափում են իրենց խմբից դուրս գտնվող անձանց հետ շփումից:

- Հաշվի առեք, որ եթե խումբն ունի 14-ից քիչ երեխաներ, և եթե երեխան այլևս չի հաճախում նախկին խումբը, ապա այն երեխաները, որոնք դեռևս չեն նշանակվել խմբում, կարող են ավելացվել խմբի մեջ՝ առավելագույն 14-ին հասնելու համար, այն պայմանով, որ խմբին նշանակված երեխան ամբողջ ժամանակ մնալու է խմբի կազմում:
- Եթե որոշ երեխաներ նշանակվում են հաստատուն խմբում, սակայն հաճախում են միայն կես դրույքով, ապա նրանք պետք է հաշվարկվեն որպես լիիրավ անդամներ՝ ի դեմս առավելագույն 12-ի: Կես դրույքով հաճախող երեխաները չեն կարող «կիսել» իրենց տեղը այլ կես դրույքով հաճախող աշակերտների հետ: Ուրիշ երեխաների չի կարելի ավելացնել, որպեսզի խմբերում նրանց թիվն անընդհատ առավելագույնը 14-ի հասնի:

- Անհատ երեխաներին նշանակված օգնականները պարտադիր կերպով չեն դիտարկվում որպես վերահսկող մեծահասակներ: Այնուամենայնիվ, նրանք պետք է դիտարկվեն ի դեմս մեկ խմբում ընդգրկված առավելագույնը 16 անձի: Խմբերի կազմակերպման համար կարևոր լրացուցիչ մանրամասները հասանելի են Կալիֆորնիայի Յանրային Առողջապահության Վարչության Փոքր Խմբերի ուղեցույցում:
- Վերահսկող մեծահասակները կարող են նշանակվել՝ աշխատելու երկու տարբեր խմբերի հետ, եթե այդ երկու խմբերը գտնվում են դպրոցում շաբաթվա տարբեր օրերին կամ օրվա տարբեր ժամերին, օրինակ՝ առավոտյան (AM) կամ ցերեկը (PM): Չի թույլատրվում Վերահսկող մեծահասակին նշանակել երկուսից ավել խմբերում:
- Թույլատրվում է փոխարինող անձանց աշխատանքը՝ կարճատև բացակայություններին փոխարինելու համար, սակայն նրանք պետք է աշխատեն երեխաների՝ օրական ոչ ավել, քան 2 խմբերի հետ: Ըստ էության, փոխարինող անձը պետք է լրացնի բացակա աշխատակցի պարտականությունները, որին նա փոխարինում է, և աշխատի բացառապես այն նույն խմբի (խմբերի) հետ, որոնց նշանակված է մշտական աշխատակիցը:
- Արագ փոխարինման անձինք (floaters), որոնք փոխարինում են վերահսկող մեծահասակներին՝ աշխատակցի ազատ օրվա համար, կարող են խմբում հանդես գալ որպես երրորդ վերահսկող անձ, սակայն չեն կարող փոխարինում իրականացնել օրվա ընթացքում ավելի քան երկու տարբեր խմբերի համար և, ըստ անհրաժեշտության, պետք է սահմանափակվեն ցանկացած խմբի հետ անցկացվող ժամանակը, որպեսզի փոխարինեն մշտական նշանակված վերահսկող մեծահասակներին:

Խմբերի կազմավորման համար կարևոր լրացուցիչ տեղեկությունները հասանելի են ԿԱ Յանրային Առողջապահության Վարչության [խմբերին Վերաբերող Ուղեցույցում](#):

Եթե թույլատրվում է աշակերտների ուսուցումը TK-6 դասարաններում, ապա այն պետք է իրականացվի հաստատուն խմբերում, սակայն խմբերի չափը չի սահմանափակվելու 14 աշակերտներով և 2 վերահսկող մեծահասակներով: Հաստատուն խմբի չափը պետք է լինի այնպիսին, որ թույլ տա պատշաճ ֆիզիկական հեռավորության պահպանում բոլոր աշակերտների և անձնակազմի անդամների միջև՝ հասանելի ուսումնական տարածքում նրանց գտնվելու ամբողջ ժամանակահատվածում:

### ԴՊՐՈՑՈՒՄ ԱԿՏԻՎԱԿԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ

Չնայած Տեղական Կրթական Գործակալությունները (LEAs) կամ դպրոցները կարող են ձևավորել այնքան խմբեր, որքան հարկավոր է մասնագիտացված ծառայությունների միջոցով հատուկ կարիք ունեցող աշակերտների կարիքները բավարարելու համար, սակայն հատուկ այս նպատակով դպրոցում միաժամանակ գտնվող ընդհանուր անձանց թիվը չի կարող գերազանցել աշակերտների ընդհանուր թվի 25%-ը: 25%-ի սահմանաչափը չի վերաբերում հեռավար ուսուցման գործողություններում ներգրավված ցերեկային խնամք ստացող և մուտքի թույլտվություն ստանալուց հետո TK-2 դասարաններ վերադարձած դպրոցահասակ երեխաներին: Դպրոցները, որոնց տրվում է մուտքի թույլտվություն՝ TK-2 դասարանների աշակերտներին դպրոց վերադարձնելու համար, կարող են դպրոցի տարածք բերել հավելյալ աշակերտներ՝ 2-րդ դասարանից բարձր աշակերտներին մասնագիտացված ծառայություններ տրամադրելու համար, բայց ոչ ցուցակագրված աշակերտների մինչև 25%-ը: Եթե դպրոցը ստացել է մուտքի թույլտվություն TK-2 դասարանների համար, ապա մասնագիտացված ծառայությունների և գնահատման համար կարող է հաստատության տարածք բերել հավելյալ աշակերտներ՝ 3-րդ և բարձր դասարաններում ցուցակագրված աշակերտների մինչև 25%-ը, եթե դպրոցը կարողանա պահպանել հեռավորության, վարակների վերահսկման և համախմբման պահանջները:

**ՎԵՐԱՀՍԿՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻՆՔ**

Վերհսկող չափահաս անձ է համարվում այն անձը, որը նշանակված է երեխաների կամ երիտասարդների մեկ խմբին, որը ֆիզիկապես շփում չունի այլ խմբերի հետ: Վերահսկող չափահաս անձ կարող է լինել երեխաների խնամքն իրականացնող անձնակազմը, վավերացված կամ որակավորված դպրոցի անձնակազմը, կամավորները, մասնակից ծնողները կամ խնամակալները կամ նշանակված այլ վերահսկող չափահաս անձը (անձինք): Այն օգնականը, որը ներկա է անհատ երեխային աջակցություն ցուցաբերելու համար, պետք է դիտարկվի որպես խմբի անդամ, բայց ո՛չ որպես վերահսկող չափահաս անձ: Վերահսկող չափահաս անձը կարող է նշանակվել 2 տարբեր հաստատուն խմբերում, եթե նրանք առաջարկում են հատուկ ծառայություններ / աջակցություն, որոնք հնարավոր չէ տրամադրել վերահսկող մեկ ուրիշ չափահաս անձի կողմից:

**ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ**

Վերահսկվող միջավայրը այն միջավայրն է, որտեղ մի քանի ընտանիքների կամ տների մի քանի երեխաներ կամ երիտասարդներ միաժամանակ վերահսկվում են չափահաս անձի կողմից: Սա ներառում է, բայց չի սահմանափակում երեխաների խնամքի լիցենզավորված հաստատությունները, ազատված երեխաների խնամքի լիցենզավորված ծրագրերը, կամ դպրոցում վերահսկման ծրագրերը, երբ դպրոցը չի գործում կամ տրամադրում է ուսումնական ծրագիր՝ հեռավար ուսուցման ձևաչափով, կամ որտեղ աշակերտների ենթախմբին առաջարկվում են որոշ կրթական ծառայություններ, ինչը սահմանված է տեղական կրթական գործակալության կողմից տվյալ դպրոցի համար:

**TK-ից մինչև 12-րդ Դասարանի Վերաբացման Ցանկ**

Հաստատության անուն՝ \_\_\_\_\_

Հասցե՝ \_\_\_\_\_

Առավելագույն Չբաղվածությունը՝ ըստ Հրդեհային Օրենսգրքի՝ \_\_\_\_\_

Մտավոր ընդհանուր քառակուսի ոտնաչափ տարածքի մատչելիությունը աշխատակազմի և/կամ աշակերտների համար \_\_\_\_\_

Դեկվարների, ուսուցիչների և այլ աշխատակիցների ընդհանուր թիվը, որոնք կվերադառնան՝ աջակցելու ուսանողների համար նախատեսված բոլոր անհատական ծառայությունների վերսկսմանը.

Աշակերտների ընդհանուր թիվը, որոնք կվերադառնան՝ ըստ դասարանի (եթե չկան, մուտքագրեք 0):

TK: \_\_\_\_\_ K: \_\_\_\_\_ 1: \_\_\_\_\_ 2: \_\_\_\_\_ 3: \_\_\_\_\_ 4: \_\_\_\_\_ 5: \_\_\_\_\_

6: \_\_\_\_\_ 7: \_\_\_\_\_ 8: \_\_\_\_\_ 9: \_\_\_\_\_ 10: \_\_\_\_\_ 11: \_\_\_\_\_ 12: \_\_\_\_\_

**ՆՇՈՒՄ.** «Աշխատակիցներ» և «աշխատակազմ» տերմիններն այս արձանագրություններում վերաբերում են այն անհատներին, որոնք դպրոցական հաստատությունում են աշխատում՝ ցանկացած կարողությամբ՝ կապված ուսուցման, մարզման, աշակերտներին աջակցման, թերապիայի անցկացման կամ առանձին աշակերտներին անհատական օժանդակության տրամադրման, հաստատության մաքրման կամ սպասարկման, վարչական կամ ցանկացած այլ գործողության հետ, որն անհրաժեշտ է դպրոցի աշխատանքն ապահովելու համար: «Աշխատակիցները» կամ «աշխատակազմը» կարող է ներառել մարդկանց, որոնք անմիջականորեն վճարվում են համապատասխան դպրոցական համակարգի կողմից, հաստատությունների կողմից, որոնք գործում են որպես տվյալ դպրոցի կապալառուներ, վճարվում են դպրոցի հետ համագործակցող դրսի հաստատությունների կողմից՝ ծառայելու աշակերտներին, վճարվում են երրորդ անձանց կողմից՝ մատուցելու անհատական աշակերտական ծառայություններ կամ չվճարվող կամավորներ, ովքեր գործում են դպրոցի ղեկավարության ներքո՝ իրականացնելու անհրաժեշտ գործառնություններ: Այս արձանագրություններում «ձևողներ» տերմինն օգտագործվում է բոլոր այն անձանց համար, որոնք հանդիսանում են աշակերտների խնամակալները:

**A. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ («ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ») ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐ ԱՅՆ  
ԿԵՏԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)**

Դպրոցը պետք է ունենա COVID-19-ի Սահմանափակման, Արձագանքի և Վերահսկման Ծրագիր, որը նկարագրում է դպրոցի բազմակողմանի մոտեցումը՝ դպրոցում COVID-19-ի տարածումը կանխելու և վերահսկելու ուղղությամբ: Ծրագիրը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ տարրերով:

- COVID-19-ի համապատասխանության նշանակված թիմ, որը պատասխանատու է COVID-19-ի հետ կապված անվտանգության բոլոր արձանագրությունների հաստատման և իրականացման համար, ինչպես նաև ապահովելու, որ աշխատակազմը և աշակերտները կրթվեն COVID-19-ի վերաբերյալ: Այս թիմի մեկ անդամ նշանակվում է ՀԱՎ (DPH)-ի հետ կապի պատասխանատու, եթե դպրոցի տարածքում բռնկում սկսվի:
- Ծրագիր կամ արձանագրություն՝ այն քայլերի վերաբերյալ, որոնք անմիջապես պետք է ձեռնարկել, եթե դպրոցի ղեկավարությունից տեղեկացվի, որ դպրոցական համայնքի որևէ անդամ (ուսուցչական կազմ, աշխատակազմ, աշակերտ կամ այցելու) COVID-19-ի համար դրական է թեստավորվել: Ծրագիրը ներառում է.
  - o Վարակված անձի անհապաղ առանձնացում դպրոցական համայնքից և ինքնամեկուսացում տանը, եթե ծանուցումը ստանալու պահին վարակվածը դեռ դպրոցի տարածքում է: Ծրագիրը պետք է թույլ տա վարակվածի ժամանակավոր դպրոցի տարածքում մեկուսացում, եթե կարգավորումներ են հարկավոր, որ վարակված անձը վերադառնա տուն:
  - o Տեղեկատվական թերթիկներ կամ այլ կյոթեր, որոնք պետք է տրվեն վարակվածին (կամ ընտանիքի համապատասխան անդամներին, եթե վարակվածը երեխա է), որոնք ընդգրկում են ինքնամեկուսացումը վերահսկող կանոնակարգեր և հղումներ՝ հավելյալ տեղեկություններ պարունակող կայքերին:
- [Դպրոցում Վարակի Հետ Շփման Կառավարման Ծրագիր](#) նախաձեռնելու ծրագիր կամ արձանագրություն՝ ՀԱՎ ցուցումներին համապատասխան (տեղադրված K-12 Բռնկման Կառավարման Ծրագրում), որը նախանշում է հետևյալ ընթացակարգերը.
  - o Վարակված(ներ)ի մեկուսացում;
  - o Դպրոցում վարակի հետ շփված մարդկանց բացահայտում;
  - o Վարակի հետ շփված աշխատակիցների և/կամ աշակերտների անհապաղ կարանտինացում; և
  - o Դպրոցում վարակի հետ շփված բոլոր անձանց թեստավորման հնարավորության



ապահովում՝ որպես հետագա վերահսկման միջոցառումների հիմք:

- Ծանուցում Հանրային Առողջապահության Վարչությանը աշխատակիցների և աշակերտների շրջանում COVID-19-ով վարակման հաստատված դեպքերի մասին, որոնք հիվանդանալու օրվան նախորդող 14 օրերի ընթացքում գտնվել են դպրոցի տարածքում: Հիվանդության սկիզբ է համարվում COVID-19-ի թեստ հանձնելու կամ վարակված անձի մոտ Ախտակիշների Ի Հայտ Գալու Օրը՝ կախված նրանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել: Վարակման դեպքերի մասին զեկուցումը պետք է կատարվի դպրոցի կողմից դեպքի մասին ծանուցումից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Դա կարող է կատարվել առցանց՝ օգտագործելով անվտանգ վեբ-հավելվածը՝ <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport> կամ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ով վարակված Անձանց և Նրանց Կոնտակտավորների Ցանկը Կրթական Ոլորտի Համար](https://www.lacounty.gov/education/covid-19-report) և ուղարկելով այն [ACDC-Education @ph.lacounty.gov](mailto:ACDC-Education@ph.lacounty.gov) էլեկտրոնային հասցեին:

- Հանրային Առողջապահության Վարչությանը (DPH) խմբակային վարակման դեպքի (3 կամ ավելի դեպք 14 օրվա ընթացքում) մասին անմիջապես զեկուցման ծրագիր: Սա կարելի է իրականացնել՝ օգտագործելով զեկուցման վերոնշյալ նույն տարբերակը: (1) զեկուցել ներկայացնելով առցանց՝ <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>, կամ (2) լրացնելով [COVID-19-ով վարակված Անձանց և Նրանց Կոնտակտավորների Ցանկը Կրթական Ոլորտի Համար](https://www.lacounty.gov/education/covid-19-report) և ուղարկելով այն [ACDC-Education@ph.lacounty.gov](mailto:ACDC-Education@ph.lacounty.gov) էլեկտրոնային հասցեին: Հանրային Առողջապահության Վարչությունը (DPH) կհամագործակցի դպրոցի հետ՝ որոշելու՝ արդյոք վարակման խմբակային դեպքը բռնկում է, որի դեպքում կպահանջվի հանրային առողջապահության կողմից բռնկման արձագանք:

- Արտակարգ իրավիճակի ծրագրեր՝ դպրոցի անհատական հաճախում պահանջող գործունեության լիարժեք կամ մասնակի փակման համար, եթե դա անհրաժեշտությունն դառնա՝ հիմք ընդունելով դպրոցում կամ համայնքում վարակի բռնկումը:

- Ծրագիր կամ արձանագրություն՝ COVID-19-ի թեստավորումը դպրոցի կանոնավոր գործունեության մեջ ներառելու համար:

- Ծրագիրն առնվազն պետք է նկարագրի թեստավորմանը հասանելիության ռազմավարությունն այն աշակերտների կամ աշխատակիցների համար, որոնք սիմպտոմատիկ են, կամ հայտնի է կամ կասկած կա, որ շփվել են SARS-CoV-2-ով վարակված անձի հետ:

- Որպես լրացում՝ դպրոցը կարող է դիտարկել նաև վարակված անձանց հետ շփում չունեցած, ասիմպտոմատիկ անձանց թեստավորման ռազմավարությունը: Կալիֆորնիայի Հանրային Առողջապահության Վարչությունն (CDPH) այս պահին չի պահանջում ասիմպտոմատիկ անձանց թեստավորման կոնկրետ հաճախականություն կամ ընթացակարգ: Այնուամենայնիվ, նահանգը ներառել է թեստավորման աջակցության տարբերակներ՝ թեստավորման լրացուցիչ պարագաների, փոխադրման (առաքման), լաբարատորիայի կարողության, ներգրավման և զեկուցման տեխնոլոգիաների, վերապատրաստման և ապահովագրության փոխհատուցման աջակցության միջոցով: Դպրոցներին խորհուրդ է տրվում տեղեկություններ ստանալ և դպրոցում թեստավորմանը վերաբերող աղբյուրները գտնել նահանգի [Անվտանգ Դպրոցներ Բոլորի Համար](https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Imz.aspx) կայքում:

- Ծրագիրը պետք է նախատեսի, որ թեստավորման բոլոր արդյունքները զեկուցվեն Հանրային Առողջապահության Վարչությանը:

- Անձնակազմի խոցելի անդամներին (65-ից բարձր տարիք ունեցող անձինք, և նրանք, որոնք քրոնիկական առողջական խնդիրներ ունեն, որոնք վարակվելու դեպքում՝ նրանց բարձր վտանգի տակ են դնում) հնարավորության դեպքում, այնպիսի աշխատանք է հանձնարարվում, որ կարելի է կատարել տնից: Այս կատեգորիայի աշխատակիցները պետք է քննարկեն իրենց մտահոգությունները իրենց բուժաշխատողի կամ մասնագիտացված առողջապահական ծառայությունների հետ, որպեսզի կայացնեն աշխատավայր վերադառնալու վերաբերյալ համապատասխան որոշումներ:

- ❑ Աշխատանքային գործընթացները, հնարավորության սահմաններում, վերաձևակերպվում են այնպես, որ աշխատակիցների տնից աշխատելու հնարավորությունները մեծանան:
- ❑ Համաձայն աշխատավարձի և ժամային կանոնակարգերին և դպրոցական մանդատներին, ստեղծվել են այլընտրանքային, փոփոխված կամ հերթափոխային ժամանակացույցներ՝ հնարավորինս առավելագույնի հասցնելու ֆիզիկական հեռավորության պահպանումը:
- ❑ Բոլոր աշխատակիցներին ասվել է չգնալ աշխատանքի, եթե հիվանդ են կամ COVID-19-ով վարակված անձի հետ են շփվել: Դպրոցի ղեկավարությունը տեղեկատվություն է տրամադրել աշխատակիցներին [գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստների](#) վերաբերյալ, ներառյալ՝ հիվանդության հետևանքով աշխատողների բացակայությունների իրավունքները, ինչպես երաշխավորված է [Ընտանիքների կողմից Կորոնավիրուսի Առաջին Արձագանքի Ակտով](#):
- ❑ Ոչ-դպրոցական նպատակներով դպրոցական հաստատությունների օգտագործումը (համայնքային ժողովներ կամ միջոցառումներ, տեղում կլինիկական այցելություններ այն մարդկանց կողմից, ովքեր ոչ աշակերտ են, ոչ անձնակազմ և այլն) չի թույլատրվում:
- ❑ Աշխատակիցների կողմից աշխատավայր մուտք գործելուց առաջ իրականացվում է [աշխատակիցների ստուգում /ախտորոշում/](#): Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության և ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև այն, թե արդյոք այդ պահին աշխատակցին հրահանգված է կարանտին պահպանել կամ մեկուսանալ: Ստուգման խորհուրդ տրվող մաս է կազմում նաև ջերմաչափումը:
- ❑ Նշված ստուգումները կարող են իրականացվել անձամբ՝ աշխատակցի հաստատություն ժամանելու պահին կամ հեռավար կարգով՝ մինչև ժամանումը՝ թվային հավելվածի միջոցով կամ այլ տարբերակով:
- ❑ Դպրոցի տարածք մուտք գործող յուրաքանչյուր անձ (դպրոցական ավտոբուսներ, ինչպես նաև դպրոցի շինություններ և բացօթյա տարածքներ), որն ուրիշների հետ շփում ունի (աշակերտների, ծնողների կամ այլ աշխատակիցների հետ) պետք է կրի **դիմակ**:
  - Աշխատակիցներին, որոնք շփվում են այլ անձանց հետ, պետք է անվճար առաջարկել համապատասխան **դիմակ**, որը ծածկում է դեմքը և քիթը: Աշխատակիցը պետք է կրի դեմքի ծածկոցը աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում, եթե շփվում է, կամ հավանական է, որ շփում կունենա այլ անձանց հետ: Այն աշխատակիցները, որոնք բժիշկը հրահանգել է չկրել **դիմակ**, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածը ծածկող շերտով՝ համապատասխան Նահանգային հրահանգներին՝ եթե իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի է այն ծածկոցը, որը ծածկում է կզակը: Միակողմանի փականներով **դիմակներ** չպետք է օգտագործվեն:
  - Աշխատակցից չի պահանջվում կրել **դիմակ**, երբ նա գտնվում է իր անձնական սենյակում կամ պատշաճ պատնեշով փակված տարածքում, որի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած վիճակում:
  - Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես կրեն **դիմակներ**՝ բացառությամբ, երբ մենակ աշխատում են փակ դռներով սենյակներում, կամ ուտելիս կամ խմելիս: Նախկինում կիրառվող բացառությունն այն աշխատակիցների համար, որոնք աշխատում էին ամուր միջնապատերով խցիկներում, որոնց բարձրությունը գերազանցում էր աշխատակցի հասակը կանգնած ժամանակ, այլևս չի գործում:
  - Բժշկական դիմակ պետք է տրամադրել յուրաքանչյուր աշխատակցի, որը խնամում է հիվանդ երեխաների, կամ որը սերտ շփում ունի առողջական խնդիր ունեցող որևէ երեխայի հետ, ում չի թույլատրվում կրել **դիմակ**:
  - Այլընտրանքային պաշտպանական ռազմավարություններ կարող են ընդունվել՝ տեղավորելու Անհատականացված Կրթությունը ստացող կամ 504 Պլանների աշակերտներին և նրանց, ովքեր չեն կարող օգտագործել կամ հանդուրժել **դիմակներ**:

- ❑ Աշխատակիցներին պետք է հանձնարարել ամեն օր լվանալ կամ փոխել իրենց դիմակները: Ծնողներին պետք է հանձնարարել՝ ապահովել, որպեսզի երեխաներն ունենան մաքուր **դիմակներ**:
- ❑ Աշխատակիցների բոլոր անհատական աշխատակայանները կամ տարածքները, որոնք օգտագործվում են թիմի անդամ հանդիսացող աշխատակիցների կողմից պետք է թույլ տան միմյանց միջև պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն: Դասասենյակի կահույքը պետք է դասավորված լինի այնպես, որ ուսուցչի սեղանի և ամենամոտ գտնվող աշակերտ(ներ)ի միջև թույլատրվի առնվազն 6 ոտնաչափ հեռավորության պահպանում:
- ❑ Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին պետք է կարգադրել չուտել կամ չխմել այլ ժամերի, քան նախատեսված է իրենց ընդմիջումների համար, երբ նրանք կարող են ապահով կերպով հեռացնել դիմակները և մյուսներից պահպանել ֆիզիկական հեռավորություն: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մշտապես մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն՝ ներառյալ երիտասարդ աշխատակիցներից և այցելուներից: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում, իսկ խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը թույլ է տալիս մյուսներից պահպանել ավելի շատ հեռավորություն և աշխատակիցների միջև տրամադրում է միջնապատեր :
- ❑ Չբաղվածությունը պետք է կրճատվի, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի հասցվի ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
  - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը,
  - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածությունը նվազեցնելու համար, և
  - Սեղանները տեղադրել իրարից վեց ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորություն, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակի վրա գծանշումներ անել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ վարակի տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ❑ Բոլոր աշխատակիցներին, ներսում աշխատող կապալառուներին, վաճառողներին և առաքման անձնակազմին պետք է տրվեն հրահանգներ ֆիզիկական հեռավորություն պահպանելու և այլ մարդկանց շրջապատում **դիմակ** կրելու անհրաժեշտության վերաբերյալ:
- ❑ Ընդմիջման սենյակները, պետքարանները, դասասենյակներն ու այլ ընդհանուր տարածքները, որոնցից աշխատակազմն օգտվում է կամ այցելում է, պետք է հաճախակի ախտահանվեն հետևյալ ժամանակացույցով՝
  - Ընդմիջման սենյակներ \_\_\_\_\_
  - Պետքարաններ \_\_\_\_\_
  - Դասասենյակներ \_\_\_\_\_
  - Լաբորատորիաներ \_\_\_\_\_
  - Բուժքույրի սենյակ \_\_\_\_\_
  - Խորհրդատվության կամ աշակերտների աջակցման այլ տարածքներ \_\_\_\_\_

- Առջևի գրասենյակ

---

- Այլ գրասենյակներ

---

- Այլ (լսարան, մարզասրահ, գրադարան, եթե բաց է)

---

- Աշխատակազմի ընդմիջումների սենյակների հաճախակի հպման մակերեսները պետք է հաճախ ախտահանվեն, և ընդհանուր օգտագործման իրերը, օրինակ՝ սրճամանները, ամանները և սպասքը փոխարինվեն մեկանգամյա օգտագործման իրերով կամ մանրակրկիտ մաքրվեն տարբեր մարկանց կողմից յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Ախտահանիչներն ու համապատասխան այլ պարագաները աշխատակիցների համար հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝

---

- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի մաքրման միջոցը պետք է հասանելի լինի բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝ (և՛չ քան բոլոր կիրառելի կետերը)
  - Շինության մուտք/եր, ելք/եր
  - Կենտրոնական գրասենյակ
  - Աստիճանավանդակի մուտքեր
  - Վերելակի մուտք (եթե կիրառելի է)
  - Դասասենյակներ
  - Ուսուցչական կազմի ընդմիջման սենյակներ
  - Ուսուցչական կազմի գրասենյակներ

---

- Օճառն ու ջուրը հասանելի են բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝
- Աշխատակիցներին պետք է ընձեռել հնարավորություն ձեռքերը հաճախակի լվանալու համար:
- Յուրաքանչյուր աշխատողին պետք է հատկացվեն իր սեփական գործիքները, պարագաները, սարքավորումներն ու սահմանված աշխատանքային տարածքը: Աշխատանքային տարածքների և ձեռք տրվող իրերի ընդհանուր օգտագործումը պետք է նվազեցվի կամ վերացվի:
- Այս Արձանագրության պատճենները պետք է տրամադրվեն բոլոր աշխատակիցներին:
- Լրացուցիչ (ընտրովի)—Նկարագրել այլ միջոցառումները՝

**B. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԱՊԱՅՈՎԵԼՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ԱՅՑԵԼՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (ՆՇԵԼ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)**

- Զաստատությունում թույլատրված աշխատողների առավելագույն քանակը՝ առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորությունը առավելագույնի հասցնելու և երբ հնարավոր չէ 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել համապատասխան ֆիզիկական պատնեշների առկայության դեպքում՝

---

- Զաստատությունում թույլատրված ուսանողների առավելագույն քանակը՝ ապահովելու համար առնվազն 6 ոտնաչափ հեռավորության պահպանումը, կամ համապատասխան ֆիզիկական պատնեշների առկայության դեպքում, երբ հնարավոր չէ 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել (որևէ դեպքում աշակերտների նստատեղերի միջև հեռավորությունը չպետք է 4 ոտնաչափից պակաս

լինի), հետևյալն է՝ \_\_\_\_\_

- Ձեռնարկվում են միջոցառումներ՝ դպրոցական ավտոբուսներում աշակերտների ֆիզիկական հեռավորության պահպանումն ապահովելու համար: Դրանք ներառում են (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Ավտոբուսի յուրաքանչյուր նստարանին կարող է նստել առավելագույնը մեկ երեխա:
  - Ամբողջ ընթացքում անհրաժեշտ է կրել **դիմակ**:
  - Պետք է օգտվել ընդմիջվող շարքերից (խստորեն խորհուրդ է տրվում, սակայն պարտադիր չէ):
  - Պատուհանները պետք է բաց լինեն (եթե օդի որակը և վարորդի անվտանգությունը հնարավորություն են տալիս, հատկապես, եթե ընդմիջվող շարքերը չեն օգտագործվում)
- Ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար կիրառվող լրացուցիչ միջոցառումներ (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Դպրոցի փոփոխված մեկնարկային ժամեր՝ թույլ տալու ամեն ավտոբուսին մեկից ավելի ուղևորություններ կատարել դպրոցական օրվա սկզբին և ավարտին:
  - Միջոցառումների կիրառում, որոնք կհեշտացնեն ծնողների կողմից աշակերտներին մեքենայով դպրոց բերելը, օրինակ՝ վաղ բացման հնարավորությունը՝ անձնակազմի ներկայությամբ, ընդլայնված կարճատև ավտոկայանումը դպրոցներում և աշխատակազմի ներկայությունը աշակերտներին մեքենայից իջեցնելու տարածքներում՝ ապահովելու աշակերտների անվտանգ տեղաշարժը մեքենայից իջնելուց մինչև դպրոց մտնելը:
  - Միջոցառումների իրականացում, որոնք օժանդակում են աշակերտների անվտանգ և տարիքին համապատասխան երթևեկությունը դեպի դպրոց՝ ներառյալ անվտանգ երթուղիներ Դեպի Դպրոց քայլող խմբերի կողմից, դպրոցների մոտ անցումների հսկիչների կիրառում, հեծանվային անվտանգություն և հեծանվային երթուղու ծրագրում:
    - Ծնողները պետք է դպրոցի անձնակազմի հետ ներգրավվեն միևնույն աշխատանքի մեջ, որպեսզի ապահովեն, որ այլընտրանքային երթևեկության տարբերակները պատշաճ կերպով ղեկավարվեն և որ ներառվեն ֆիզիկական հեռավորության պահպանման և **դիմակների** օգտագործման ռազմավարությունները:
  - Շենքի ենթակառուցվածքը հարմարեցվում է հեծանիվներով երթևեկությանն առավելագույն աջակցություն ապահովելու համար, և հնարավորինս ավելացվում է հեծանիվները պահելու և կայանելու հնարավորությունը:
  - Այլ \_\_\_\_\_
- Միջոցառումներ պետք է ձեռնարկվեն՝ ապահովելու ֆիզիկական հեռավորության պահպանումը, երբ աշակերտները, ծնողները կամ այցելուները մտնում կամ շարժվում են դպրոցի մուտքի միջով: Սրանք պետք է ներառեն (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Դասաժամերը հարմարեցված են՝ համոզվելու համար, որ ընդհանուր օգտագործման տարածքներով (օրինակ՝ միջանցքով կամ լոգասենյակում) տվյալ պահին միայն մեկ ենթախումբ է շարժվում:
  - Դպրոցի աշխատակիցները կանգնում են միջանցքներում՝ ապահովելու ֆիզիկական հեռավորությունը, երբ աշակերտները ներս են մտնում, անցնում են ախտանիշների ստուգում և շարժվում դասասենյակներ:
  - Վերելակի հզորությունը, եթե կիրառելի է, սահմանափակվում է մարդկանց այն քանակով, որոնք կարող են տեղավորվել՝ ուղևորների միջև պահպանելով 6 ոտնաչափ հեռավորություն: շինություն մտնելու և դուրս գալու զբաղված ժամերին այս թիվը կարելի է

դարձել առավելագույնը միաժամանակ 4 ուղևոր՝ ցանկացած վերելակի համար, որը հնարավորություն չի տալիս ուղևորների միջև 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել: Բոլոր ուղևորներից պահանջվում է կրել **դիմակներ**:

- Հետևյալ միջոցառումները կիրառվում են՝ սանդուղքների վրա կուտակումներ թույլ չտալու համար.
  - Դեպի վերև և ներքև սանդուղքների նշանակում \_\_\_\_\_
  - Դասերի միջև ընդմիջումների ժամերի փոփոխություններ \_\_\_\_\_
  - Դպրոցի աշխատակազմի կողմից սանդուղքների հսկողություն \_\_\_\_\_
  - Այլ \_\_\_\_\_

Միջոցառումներ են իրականացվում՝ ապահովելու դասասենյակների ներսում ֆիզիկական հեռավորության պահպանումը: Սա ներառում է (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).

Խմբակային մոտեցում է ընդունվել ամբողջ դպրոցում՝ պահպանելով կայուն խումբ, որը բաղկացած է ոչ ավելի, քան 14 երեխաներից կամ երիտասարդներից և ոչ ավելի, քան երկու վերահսկող չափահասներից, վերահսկող միջավայրում, որտեղ վերահսկող չափահասները և երեխաները միասին են մնում բոլոր գործողությունների ընթացքում (օրինակ՝ սնունդ, հանգիստ և այլն), և խուսափում են շփումից իրենց խմբից դուրս գտնվող մարդկանց հետ՝ դպրոցական ողջ օրվա ընթացքում (վերահսկող չափահաս անձը կարող է նշանակվել 2 տարբեր հաստատուն խմբերում, եթե նա առաջարկում է մասնագիտացված ծառայություններ/աջակցություն, ինչը մեկ այլ վերահսկող անձի կողմից չի կարող տրամադրվել): Առավելագույնը 16 անձ ներառող խմբերից բացառություն է կազմում միայն անհատական լրիվ ուսուցումը, երբ հաստատուն խմբերի առավելագույն չափը կլինի այնքան, որ հնարավորություն տա ֆիզիկական հեռավորություն պահպանել առկա ուսումնական տարածքում:

- Անհատապես հաճախումով դասարանի չափը սահմանափակվում է \_\_\_\_\_ տարրական դասարանների աշակերտներ:
- Անհատապես հաճախումով դասարանի չափը սահմանափակվում է \_\_\_\_\_ միջին և բարձր դասարանների աշակերտներ:
- Դպրոցական օրը բաժանվել է հերթափոխերի՝ թույլ տալու յուրաքանչյուր դասարանում ավելի քիչ թվով աշակերտներ:
- Աշակերտների հաճախելու ժամանակացույցը փոփոխվել է՝ նվազեցնելու տվյալ օրվա ընթացքում դասարանում աշակերտների ընդհանուր թիվը:
- Որոշ դասեր ամբողջովին դարձել են առցանց:
- Առցանց հաճախելը որպես տարբերակ առաջարկվում է բոլոր դասարանների բոլոր աշակերտների համար:
- Դասարանների ներսում աշակերտների քանակը նվազեցնելու համար օգտագործվում են այլընտրանքային տարածքներ: Սա կարող է ներառել.
  - Դպրոցի գրադարան \_\_\_\_\_
  - Լսարան \_\_\_\_\_
  - Բուֆետ \_\_\_\_\_
  - Մարզադահլիճ \_\_\_\_\_
  - Այլ \_\_\_\_\_
- Դասարանի կահույքը դասավորված է՝ ապահովելու հնարավոր չափով 6 ոտնաչափ հեռավորություն իրենց սեղանների մոտ նստած աշակերտների, ինչպես նաև

աշակերտների և ուսուցիչների միջև (գրասեղանների/սեղանների տեղադրում, հատակին գծանշանների կիրառում՝ կշելու պահանջվող հեռավորությունը, և այլն): Երբ 6 ոտնաչափ հեռավորությունը հնարավոր չէ պահպանել, օգտագործվում են ֆիզիկական պատնեշներ՝ սերտ շփումը նվազագույնի հասցնելու համար: Որևէ դեպքում աշակերտների նստատեղերի միջև հեռավորությունը չպետք է 4 ոտնաչափից պակաս լինի:

- Դասարանի ներսում խմբային գործողությունների համար նախատեսված կահույքը, որը աշակերտներին մոտեցնում է իրար 6 ոտնաչափից քիչ հեռավորությամբ, ձևափոխվել է կամ հանվել դասարանից:
- Դասարանների քնելու կամ հանգստանալու տարածքներում աշակերտներին միմյանցից 6 ոտնաչափ հեռու պետք է տեղավորել՝ պահպանելով ոտք և գլուխ դիրքը:
- Դասավանդման մեթոդները փոփոխվել են՝ խուսափելու աշակերտների միջև սերտ շփումներից լաբորատորիաներում և այլ դասերի ընթացքում, որոնք սովորաբար ներառում էին խմբային աշխատանքներ:
- Այլ

Մարզարահի ցանկացած դասընթացներ առաջարկվում են բացօթյա և պետք է ընտրվեն այնպես, որ թույլ տան ֆիզիկական հեռավորության պահպանումը, շփում պարունակող սպորտաձևերը չեն թույլատրվում:

Դպրոցի գործունեության ծրագրերը իրականացնում են ֆիզիկական հեռավորության պահպանում հանդերձարաններում (աշակերտները պահպանում են 6 ոտնաչափ հեռավորություն): Ծրագրերը պետք է ներառեն.

- Հանդերձարանների մուտքը հասանելի է միայն այն դեպքերում, երբ հնարավոր է անձնակազմի կողմից վերահսկողություն: Հանդերձարանների հերթափոխային հասանելիություն:
- Աշակերտների հագուստի, գրքերի և այլ պարագաների պահման այլընտրանքային տարբերակների ստեղծում:

Միջոցառումներ են իրականացվում՝ ապահովելու ֆիզիկական հեռավորության պահպանումը դպրոցական սննդի ժամանակ: Սա կարող է ներառել (կշեք բոլորը, որոնք կիրառելի են).

- Սնունդն ուտում են դասասենյակներում կամ բացօթյա վայրերում՝ տարրական տարբեր դասարանների աշակերտներին միմյանց չխառնելով:
- Եթե աշակերտները շարք են կանգնում սնունդը վերցնելու համար, օգտագործվում է կպչուն ժապավեն կամ այլ գծանշաններ՝ ցանկացած երկու աշակերտի միջև 6 ոտնաչափ հեռավորությունն ապահովելու համար:
- Աշխատակիցներ են տեղակայվում սնվելու ընդմիջումների ժամանակ, որպեսզի պահպանեն ֆիզիկական հեռավորությունը և թույլ չտան, որ տարրական տարբեր դասարանների աշակերտները խառնվեն:
- Եթե ճաշում են ճաշարանում, ապա սնվելու ժամերը պետք է փոփոխվեն՝ միաժամանակ ճաշարանում միայն մեկ համախումբ թույլ տալու համար:
- Եթե ճաշում են ճաշարանում, սեղանների/աթոռների միջև տարածությունը պետք է ընդլայնվի՝ թույլ տալու 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորությունը: Որպես այլընտրանք սեղանների/աթոռների միջև կարելի է օգտագործել պատնեշներ, եթե 6 ոտնաչափ հեռավորությունը հնարավոր չէ պահպանել:

Հնարավորինս վերափոխվել են սննդի պատրաստման և սպասարկման գործողությունները՝ աշխատողների միջև ֆիզիկական հեռավորության հասնելու համար: Օրինակ՝ խոհանոցի և ներքին

տարածքների հատակներին նշաններ են արված՝ ամրապնդելու ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջները:

- Միջոցառումներ են կիրառվում՝ թույլ տալու ֆիզիկական հեռավորության պահպանումը աշակերտների աջակցման ծառայությունների համար օգտագործվող տարածքներում:
  - Աշակերտների աջակցման անձնակազմին, ներառյալ դպրոցի աշխատակիցներին (բուժքույրեր, խորհրդատուներ, թերապևտներ և այլն) և հարակից օժանդակ ծրագրերի աշխատակիցներին (բուժաշխատողներ, առողջապահության մանկավարժներ, և այլն) հանձնարարվել է աշակերտների աջակցման ծառայություններում ներգրավվելիս հնարավորինս պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:
  - Դպրոցի տարածքում աշակերտների աջակցման ծառայությունների համար կիրառվող կահույքն ու սարքավորումները այնպիսի դասավորություն պետք է ունենան, որ խթանվի ցանկացած երկու աշակերտի և/կամ աշակերտների և անձնակազմի միջև 6 ոտնաչափ հեռավորության պահպանումը:
  - Հնարավոր և համապատասխան դեպքում, բուժական և աջակցման գործողություններն իրականացվում են վիրտուալ եղանակով:
  - Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել սարքավորումների և ապրանքների համատեղ օգտագործումից: Եթե տվյալ սարքավորումը պետք է ընդհանուր օգտագործվի, այն պետք է ախտահանվի տարբեր աշակերտների և/կամ աշխատակցի կողմից յուրաքանչյուր օգտագործումից առաջ և հետո:
  - Աշակերտներին աջակցման ծառայություններ մատուցող անձնակազմին տրամադրվում է Անձնական Պաշտպանիչ Միջոցներ՝ համապատասխան Cal OSHA-ի պահանջներին:
- Միջոցառումներ են կիրառվում՝ թույլ տալու ֆիզիկական հեռավորության պահպանումը դպրոցի վարչական տարածքներում:
  - Նշանները զգուշացնում են այցելուներին դպրոցի գրասենյակի անձնակազմից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանելու անհրաժեշտության մասին:
  - Կայչուն ժապավեն կամ այլ նշումներ են օգտագործվում՝ ընդունարանի սեղանների շուրջ վեց ոտնաչափ շառավիղ սահմանելու համար:
  - Վարչական անձնակազմի աշխատակազմները պետք է վերադասավորվեն՝ թույլ տալու 6 ոտնաչափ հեռավորություն այն անձանց միջև, որոնք տարածքը համատեղ են օգտագործում կամ գրասենյակի անձնակազմի և աշակերտների կամ այլ աշխատակիցների միջև, որոնք պետք է այցելեն այդ տարածք:

**C. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍՎՈՒՄԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

- Նախքան աշակերտների, այցելուների և անձնակազմի դպրոց մտնելն իրականացվում է ստուգում: Ստուգումը պետք է ներառի հնարավոր COVID-19-ին առնչվող ախտանիշների ստուգում և որևէ այլ ախտանիշների ստուգում, որոնք անձը կարող է ունենալ: Այս ստուգումները կարելի է իրականացնել հեռավար եղանակով (օգտագործելով՝ թվային հավելված կամ այլ տարբերակով) կամ անհատապես՝ ժամանման պահին: Մուտքի պահին՝ որպես ստուգման մաս, խորհուրդ է տրվում կատարել ջերմաչափում՝ առանց հպման ջերմաչափող սարքի միջոցով՝ հատկապես այն այցելուների համար, որոնք տանը կանոնավոր կերպով չեն ստուգվել:
  - Աշակերտների, անձնակազմի և այցելուների մասին, որոնց ստուգման արդյունքը դրական է եղել մուտքի պահին կամ դպրոցական օրվա ընթացքում ցանկացած պահի, պետք է



տեղեկացնել COVID-19-ի Համապատասխանության Խմբին (ՏԵՍ Բաժին Ա): COVID-19-ի Համապատասխանության Խումբը կորոշի՝ արդյոք անձը պետք է հեռանա դպրոցից՝ համաձայն Հանրային Առողջապահության Վարչության՝ Կրթական Հաստատություններում [Վիտանիշների և Վարակման Ստուգման](#) Ուղեցույցի: Աշակերտներին, որոնց ստուգման արդյունքը դրական է, պետք է տրամադրել վիրաբուժական դիմակ և տեղափոխել նախապես ընտրված առանձին մեկուսացման տարածք, որտեղ նրանք կարող են մնալ՝ մինչև հեռանալու մասին որոշում կայացնելը և նրանց տուն տեղափոխումն իրականացնելը:

- Համաձայն Հանրային Առողջապահության Վարչության Վիտանիշների և Վարակման Ստուգման Ուղեցույցի՝ աշակերտներին, անձնակազմի անդամներին և այցելուներին, որոնք սերտ շփում են ունեցել հնարավոր COVID-19-ի դրական արդյունք ունեցող անձի հետ, պետք է տեղեկացնել հնարավոր վարակման մասին: Այդ անձանցից չի պահանջվում կարանտին պահպանել, քանի դեռ վարակման փաստը չի հաստատվել COVID-19-ի վիրուսային ախտորոշիչ թեստի դրական արդյունքի կամ բժշկի կողմից հիվանդանոցային ախտորոշման միջոցով: Աշակերտներին, որոնց մոտ հաստատված վարակման դեպք է արձանագրվել, ուղեկցում են նախապես ընտրված մեկուսացման տարածք, որտեղ նրանք կարող են մնալ, մինչև կազմակերպվի նրանց տուն վերադառնալը: Այս տարածքը առանձին է ախտանիշներ ունեցող աշակերտների համար նախատեսված տարածքից: Դա կարող է լինել առանձին սենյակ, կամ նույն սենյակում առանձին տարածք, որը պատնեշով առանձնացված է: Տուն վերադառնալուց հետո, նրանց հանձնարարվում է ինքնակարանտին պահպանել ինչպես դա պահանջվում է Առողջապահության Պատասխանատուի Կարանտին Պահպանելու Հրամանով:
- Մեծահասակների, միջին և ավագ դպրոցական տարիքի աշակերտների ստուգումը ներառում է հարց՝ տանը, դպրոցում կամ այլ վայրում որևէ անձի հետ սերտ կապի մասին, որի COVID-19-ի թեստի արդյունքը դրական է եղել:
  - Յուրաքանչյուր չափահաս անձի, որը ստուգվել է վարակման համար և հայտնում է, որ ունեցել է վարակված անձի հետ սերտ շփում, հանձնարարվում է հեռանալ դպրոցից, տուն վերադառնալ՝ նախաձեռնելու ինքնակարանտին և COVID-19-ի թեստ հանձնել:
  - Յուրաքանչյուր միջին կամ բարձր դասարանի աշակերտ, որը ստուգվել է վարակման համար և հայտնում է, որ ունեցել է վարակված անձի հետ սերտ շփում, տրվում են բժշկական դիմակներ և նրանց ուղեկցում են նախապես ընտրված մեկուսացման տարածք, որտեղ նրանք կարող են մնալ, մինչև կազմակերպվի ծնողների կողմից նրանց վերցնելը, որպեսզի տանը կարանտինում մնան: Ծնողներին խորհուրդ է տրվում երեխային թեստավորել:
- Միջոցառումներ են իրականացվում սահմանափակելու անձնակազմի անդամ և աշակերտ չհանդիսացող անձանց այցելությունները՝ վարակի վտանգը կանխելու համար: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Հնարավորինս պետք է խուսափել աշխատակազմից և աշակերտներից զատ այլ անձնաց այցելությունը դպրոց: Դպրոցում սովորող աշակերտների ծնողներին խրախուսվում է հնարավորինս հեռավար կարգով աշխատել դպրոցի անձնակազմի հետ: Թույլատրվում են արշավային շրջայցեր սպասվող աշակերտների համար, եթե շրջայցը սահմանափակվում է մեկ ընտանիքով / մեկ միավոր ընտանիքով, շրջայցը իրականացվելու է առօրյա դպրոցական ժամերից դուրս (երեկոյան, կամ շաբաթ կամ կիրակի օրերին), երբ ներգրավված աշակերտները և անձնակազմի անդամները ներկա չեն, և պետք է ուսումնասիրվեն սոցիալական հեռավորության բոլոր ռազմավարությունները՝ ներառյալ պատշաճ ֆիզիկական հեռավորության պահպանումը, բոլոր անձանց կողմից **դիմակներ** կրելը և վարակի վերահսկման մյուս բոլոր միջոցառումները, եթե կիրառելի է:
  - Սովորող աշակերտների ծնողներից զատ այլ այցելությունները սահմանափակվում են

այն անձանցով, որոնց ներկայությունն անհրաժեշտ է դպրոցի գործունեության իրականացման համար: Այցելությունները կատարվում են միայն ժամադրությամբ և նախապես գրանցվում են այցելուների մատյանում, որը ներառում է այցելուի անունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն: Այցելուներին հանձնարարվում է մենակ գալ իրենց ժամադրություններին: Եթե այցելուին մեկ այլ անձ պետք է ուղեկցի, (օր.՝ թարգմանչական օգնություն կամ այցելուն անչափահաս է կամ ունի անչափահաս աշակերտներ), նրանց տվյալները գրանցվում են այցելուների մատյանում:

- Այցելուները, որոնք ժամանում են դպրոց երեխաների հետ, ովքեր տվյալ դպրոցի աշակերտ չեն հանդիսանում (օր.՝ աշակերտների փոքր քույր կամ եղբայր), պետք է ապահովեն, որ այս երեխաները ման Կափահասի կողքին, խուսափեն հպվել որևէ այլ անձի կամ իրերի, որոնք իրենց չեն պատկանում և դիմակ կրեն, եթե 2 տարեկանից մեծ են և շնչառական խնդիրների պատճառով վտանգի տակ չեն:
- Դպրոցի ներսում այցելուների տեղաշարժը հնարավորինս սահմանափակվում է նախատեսված տարածքներով, ինչպիսիք են՝ ընդունարանը կամ նախասրահի տարածքը, գրասենյակները, համաժողովների կամ հանդիպումների սենյակները և հանրային պետքարանները: Այցելուներին չի թույլատրվում շփվել խմբերի հետ:
- Դպրոց ժամանող այցելուներին պետք է հիշեցվի, որպեսզի նրանք կրեն **դիմակներ** դպրոցում գտնվելու ամբողջ ընթացքում: Սա վերաբերում է ինչպես բոլոր մեծահասակներին, այնպես էլ 2 տարեկան և բարձր երեխաներին: **Այն անձինք, որոնց իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ, պետք է կրեն ստորին հատվածում կտոր ամրացված դեմքի վահաններ՝ համապատասխան Նահանգի հրահանգների, եթե իրենց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը ծածկող կտորով դեմքի վահանները: Միակողմանի փականներով դիմակներ չպետք է օգտագործվեն:** Ձեր աշխատակիցների և այցելուների անվտանգությունը ապահովելու համար **դիմակները** պետք է հասանելի լինեն այն այցելուների համար, ովքեր ժամանել են առանց **դիմակի**:

☐ Միջոցառումներ են իրականացվում՝ դպրոցում օպտիմալ օդափոխությունը խթանելու համար: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).

- Դասասենյակներում սովորելու, սնունդ ստանալու և գործունեության առնվազն 50% -ը, հնարավորության սահմանում, տեղափոխվում է արտաքին տարածք, եթե դա թույլ է տալիս եղանակը:
- Դպրոցի օդափոխման (HVAC) համակարգը պետք է գտնվի աշխատանքային լավ վիճակում:
- Օդափոխման համակարգերը նախատեսված են առավելագույնի հասցնելու ներսի/դրսի օդի փոխանակությունը, բացառությամբ, եթե դրսի պայմանները (վերջերս պատահած հրդեհներ, դրսի շատ բարձր ջերմաստիճան, օդում ծաղկափոշու բարձր քանակությունը և այլն) սա դարձնում են աննպաստ:
- Պետք է տեղադրվեն շարժական, բարձր արդյունավետության օդազտիչ սարքեր, եթե կիրառելի է:
- Դռները և պատուհանները դպրոցական օրվա ընթացքում բաց են մնում, եթե կիրառելի է և եթե դրսի պայմանները դա թույլ են տալիս:
- Օդի զտիչները արդիականացվել են՝ հնարավոր առավելագույն արդյունավետությամբ:
- Այլ.

- Միջոցառումներ են իրականացվում՝ ապահովելու դպրոցի ամբողջ տարածքի, մակերեսների և առարկաների համապատասխան մաքրումը և ախտահանումը: Դրանք կարող են ներառել (ևչեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Սահմանվել է մաքրման և ախտահանման ժամանակացույց՝ մաքրող միջոցները չափից քիչ կամ ավել օգտագործելուց խուսափելու համար:
  - Ավտոբուսները մանրակրկիտ մաքրվում և ախտահանվում են ամեն օր և COVID-19-ի ախտանշաններ դրսևորող ցանկացած անձի տեղափոխելուց հետո: Վարորդներին տրամադրվում են ախտահանիչ թաց անձեռոցիկներ և մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ՝ երթևեկության ընթացքում անհրաժեշտ դեպքում մակերեսների ախտահանման համար: Հաճախակի հպման մակերեսները ախտահանվում են ավտոբուսի յուրաքանչյուր երթուղու ավարտից հետո:
  - Ընդհանուր տարածքները և այդ տարածքներում հաճախակի հպման առարկաները (սեղաններ, դռների բռնակներ, լույսերի անջատիչներ, բռնակներ, գրասեղաններ, հեռախոսներ, ստեղնաշարեր, վերելակի անջատիչներ և կոճակներ, սենսորային էկրաններ, տպիչներ/պատճենահանող սարքեր, բռնվելու ձողեր և բազրիքներ) պետք է ախտահանվեն օրական առնվազն մեկ անգամ կամ ըստ ռեսուրսների հնարավորության ավելի հաճախակի՝ օգտագործելով համապատասխան ապրանքներ (տե՛ս ստորև):
  - Առարկաների ընդհանուր օգտագործումը հնարավորինս վերացվում է, օրինակ՝ խմելու ջրի ցայտաղբյուրները փակվում են, և որպես այլընտրանք՝ տրամադրվում են ջրի անհատական շշեր, խաղահրապարակներում հաճախակի հպման սարքավորումները կարող են հանվել օգտագործումից և փոխարինվել առանց հպման խաղահրապարակի խաղերով և այլն:
  - Այն դեպքում, երբ անհատականացված այլընտրանքների կիրառությունը հնարավոր չէ, օրինակ՝ լաբորատորիաներում և նկարչության սենյակներում, որտեղ որոշ սարքավորումներ հարկ կլինի օգտագործել բազմաթիվ աշակերտների կողմից, առարկաները և մակերեսները մաքրվում և ախտահանվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո:
  - Մաքրող ապրանքատեսակները, որոնք արդյունավետ են COVID-19-ի դեմ (դրանք թվարկված են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA)-N հաստատված ցուցակում), կիրառվում են համաձայն արտադրողի ցուցումներին: Եթե EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցները հասանելի չեն, ապա կարող են կիրառվել այլընտրանքային միջոցներ (օրինակ 1/3 սպիտակեցնող (bleach) լուծույթին մեկ գալոն ջուր կամ 70% սպիրտ պարունակող լուծույթներ ավելացնել): Իրար մի՛ խառնեք սպիտակեցնող (bleach) կամ ախտահանիչ միջոցները - դա առաջացնում է թունավոր գոլորշիներ, որը կարող է շատ վտանգավոր լինել շնչելու համար:
  - Մաքրող և այլ անձնակազմը, ովքեր պատասխանատու են դպրոցական մակերեսների և առարկաների մաքրման և ախտահանման համար, պատրաստված, վարժեցված են համապատասխան արտադրողի ցուցումներին, Cal OSHA անվտանգ օգտագործման պահանջներին, և եթե կիրառելի է, «Առողջ Դպրոցների Մասին» Օրենքով:
  - Մաքրող և այլ անձնակազմը, ովքեր պատասխանատու են մաքրման և ախտահանման համար, զինված են անձնական պաշտպանության համապատասխան միջոցներով, ներառյալ՝ ձեռնոցներ, աչքերի պաշտպանիչ միջոցներ, շնչառական պաշտպանիչ միջոցներ և այլ համապատասխան պաշտպանիչ միջոցներ, որոնք պահանջվում են տվյալ ապրանքն օգտագործելիս:
  - Բոլոր մաքրող միջոցները պետք է երեխաների հասանելիությունից հեռու լինեն և պահվեն սահմանափակ մուտքով տարածքում:

- Մաքրման և ախտահանման ժամանակ օդափոխությունը հնարավորինս առավելագույնի է հասցվում, եթե օդորակիչ է օգտագործվում, պետք է օգտագործել այն պարամետրը, որը դրսի օդ է ներս բերում: Պետք է փոխել և ստուգել օդի ֆիլտրերը և զտիչ համակարգը՝ ապահովելու օդի օպտիմալ որակը:
- Դպրոցի տարածքների ընդլայնված մաքրումը պետք է կատարվի այն ժամանակ, երբ աշակերտները դպրոցում չեն, և հատկացվի համապատասխան ժամանակ, որպեսզի տարածքները լավ օդափոխվեն՝ մինչև դպրոցական օրվա սկիզբը:
- Ձեռնարկվում են քայլեր՝ ապահովելու, որ բոլոր ջրային համակարգերը և լվացարանները հաստատության երկարատև փակվելուց հետո, վերաբացման ժամանակ օգտագործման համար լինեն անվտանգ, որպեսզի նվազեցվի Լեգիոներների և ջրի հետ կապված այլ հիվանդությունների վտանգը:
- Սանհանգույցները, նախասենյակները, ընդմիջման սենյակները և հանգստի և այլ ընդհանուր տարածքները հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով՝
  - Սանհանգույցներ \_\_\_\_\_
  - Նախասենյակներ/մուտքի տարածքներ \_\_\_\_\_
  - Ուսուցիչների/աշխատակազմի ընդմիջման սենյակներ \_\_\_\_\_
  - Դասասենյակներ \_\_\_\_\_
  - Կաֆետերիայի ճաշելու տարածք \_\_\_\_\_
  - Կաֆետերիայի սննդի պատրաստման տարածք \_\_\_\_\_
  - Առջևի գրասենյակ \_\_\_\_\_
  - Այլ գրասենյակներ \_\_\_\_\_
  - Այլ տարածքներ \_\_\_\_\_

- Միջոցառումներ են իրականացվել՝ ապահովելու անձնակազմի, աշակերտների և այցելուների կողմից **դիմակներ** կիրառումը: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Անձնակազմին, ծնողներին և աշակերտներին տեղեկացվել է **դիմակներ** կրելու պահանջի վերաբերյալ՝ նախքան դպրոցը սկսելը և կանոնավոր կերպով՝ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում:
  - 2 տարեկանից մեծ բոլոր աշակերտներից պահանջվում է դպրոցի տարածքում եղած ամբողջ ընթացքում կրել **դիմակներ**, բացառությամբ՝ երբ ուտում են, խմում կամ այլ գործողություններ իրականացնում, որոնք բացառում են կտորե դիմակներ կրելը:
  - Այլընտրանքային պաշտպանական ռազմավարություններ կարող են ընդունվել՝ Անհատականացված Կրթություն ստացող կամ 504 Ծրագրերի աշակերտների համար, որոնք չեն կարող օգտագործել կամ հանդուրժել **դիմակներ**:
  - Աշխատակիցներին, ծնողներին և աշակերտներին տեղեկատվություն է տրամադրվում

**դիմակների** պատշաճ օգտագործման վերաբերյալ, ներառյալ յուրաքանչյուր օրվա օգտագործումից հետո դրանց լվանալու անհրաժեշտության մասին:

- Դպրոցի մուտքի մոտ, դպրոցի գրասենյակի մուտքի մոտ և ամբողջ դպրոցի տարածքում փակցված նշանները ամրապնդում են այս պահանջը և պատկերում **դիմակների** պատշաճ օգտագործումը:
- Եթե հնարավոր է, դպրոցական տարվա սկզբին յուրաքանչյուր աշակերտի տրամադրվում է 2 **դիմակ**: Եթե դա հնարավոր չէ, ծնողներին և աշակերտներին տեղեկատվություն է տրամադրվում իրենց սեփական կտորե դիմակները պատրաստելու մեթոդների մասին:
- Ավելի փոքր երեխաների ծնողներին խրախուսվում է ամեն օր երեխայի համար տրամադրել երկրորդ **դիմակ**, այն դեպքերի համար, եթե այն մեկը, որը երեխան կրում է կեղտոտվի; սա թույլ կտա օրվա ընթացքում փոխել **դիմակը**:
- Ֆիզիկական հեռավորության պահանջը պարտադրելու նպատակով, դպրոցի մուտքի մոտ կամ միջանցքներում կամ այլ ընդհանուր տարածքներում տեղակայված աշխատակիցները աշակերտներին պետք է հիշեցնեն նաև **դիմակներ** կրելու կանոնների մասին:
- Աշխատակիցներին, որոնք ներգրավված են այնպիսի գործունեության մեջ, որը թույլ չի տալիս ֆիզիկական հեռավորության պահպանում (օրինակ՝ ֆիզիկական թերապիայի կամ որոշակի աշակերտներին անձնական օժանդակության տրամադրում), ըստ անհրաժեշտության տրամադրվում են համապատասխան անձնական պաշտպանության միջոցներ (ծեռնոցներ, դիմակներ, հանդերձանք և այլն):
- Աշխատակիցներին, որոնք խնամում են հիվանդ աշակերտի, տրամադրվում է բժշկական տեսակի դիմակ՝ իրենց կրելու համար և բժշկական տեսակի դիմակ՝ աշակերտի կրելու համար (եթե կարող է հանդուրժել), մինչև աշակերտը կլքի դպրոցի տարածքը:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**. Այն աշխատողներից և աշակերտներից, որոնք մենակ են գտնվում փակ գրասենյակներում, չի պահանջվում կրել **դիմակ**: Աշակերտները կարող են նաև հանել **դիմակները**, երբ ուտում կամ քնում են, կամ երբ **դիմակ** կրելը այլ կերպ անհրաժեշտ է (օր.՝ լոգանք ընդունելիս, և այլն): Դպրոցը կորոշի, թե արդյոք ճիշտ է ցածր դասարանների ուսուցիչների համար կզակի տակ ամրացող կտորով դեմքի վահաններ կրելը՝ որպես **դիմակների** փոխարինող տարբերակ, որը թույլ կտա երիտասարդ աշակերտներին տեսնել իրենց ուսուցչի դեմքը և խուսափել հնչյունական հրահանգների հնարավոր խոչընդոտներից:

Միջոցառումներ պետք է իրականացվեն՝ ապահովելու աշխատակազմի, աշակերտների և այցելուների կողմից ձեռքերը հաճախակի լվանալը: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են):

- Աշակերտներին և աշխատակազմի հաճախակի հնարավորություններ են տրվում ձեռքերը լվանալու համար: Հարկավոր է ձեռքերը օճառով լվանալ 20 վայրկյան, օճառը քսելուց հետո լավ տրորել և օգտագործել թղթե սրբիչներ (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչներ)՝ ձեռքերը լիակատար չորացնելու համար: Յուրաքանչյուր խմբից պահանջվում է օգտվել կոնկրետ լոգարանից: Եթե մեկից ավելի խումբ նշանակվի նույն լոգասենյակի օգտագործման համար, օգտագործվում է գունավոր կողավորված համակարգ՝ միաժամանակ զուգարանը օգտագործող տարբեր խմբերի ուսանողներին նվազագույնի հասցնելու համար:
- Ավելի կրտսեր աշակերտների համար կանոնավոր կերպով նախատեսվում է ձեռքերի լվացման հաճախակի ընդմիջումներ, ներառյալ՝ ունելուց առաջ և հետո, պետքարանից օգտվելուց հետո, բացօթյա խաղից հետո և խմբային ցանկացած գործողությունից առաջ

և հետո:

- Աշխատակիցներին հանձնարարվում է ցուցադրել ձեռքերի հաճախակի լվացումը՝ հատկապես ցածր դասարաններում, երբ լոգարաններից օգտվելու ժամանակահատվածը հնարավորություն է տալիս ձևավորելու առողջ սովորություններ և վերահսկելու ձեռքերի պատշաճ լվացումը:
- Դասատեսչակների մոտ տեղադրվել են ձեռքերի լվացման շարժական կայաններ՝ հնարավորինս նվազեցնելու լոգատեսչակներում շարժումը և կուտակումները:
- Էթիլային սպիրտի հիմքով (պարունակում է առնվազն 60% էթանոլ) ձեռքի ախտահանիչ միջոցը պետք է հասանելի լինի աշակերտների և անձնակազմի համար դպրոցի ողջ ռազմավարական տարածքում այնտեղ, որտեղ չկա լվացարան կամ ձեռքի լվացման շարժական կայան (լսարաններում կամ դրանց հարևանությամբ, սենյակներում, որտեղ տրամադրվում են օժանդակ ծառայություններ, երաժշտության և արվեստի սենյակներում): Նախընտրելի է Էթիլային սպիրտի հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցը , և այն պետք է օգտագործվի դպրոցի տարածքում: Որպես հիմնական ակտիվ բաղադրիչ իզոպրոպիլային սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցները դպրոցում չեն օգտագործվում, քանի որ այն ավելի գրգռիչ է և կարող է ներծծվել մաշկի միջոցով:
- Սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցներ կուլ տալը կարող է սպիրտային թունավորում առաջացնել: Ձեռքերի ախտահանիչ միջոցը չպետք է բաց լինի և պետք է օգտագործվի մեծահասակների հսկողության ներքո մինչև 9 տարեկան երեխաների համար: Ֆակուլտետի և անձնակազմի աշխատակիցները պետք է տեղեկացված լինեն կուլ տալու վտանգի մասին, և պետք է զանգահարեն թունավորումների Վերահսկման Կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-222-1222, եթե հիմք կա մտածելու, որ աշակերտը կուլ է տվել ձեռքերի ախտահանման ամբողջ հեղուկը:
- Ձեռքերի ախտահանիչ միջոցները, օճառը և ջուրը, անձեռոցիկները և աղբարկղերը հասանելի են հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում, ընդունարանում և աշխատավայրի ցանկացած այլ մասում կամ անմիջապես դրսում, որտեղ մարդիկ անմիջականորեն շփվում են:

- ☐ Միջոցառումներ են իրականացվում ապահովելու վարակի վերահսկումը դպրոցական ճաշարանում կամ այլ վարերում, որտեղ սնունդ է մատուցվում կամ վերցվում:
  - Բուժետների և ընտանեկան ոճի սնունդների մատուցումը պետք է դադարեցվի:
  - Սննդի տրամադրման տարբերակները պետք է ներառեն նախապես փաթեթավորված սնունդ, ճաշարանի աշխատակազմի կողմից մատուցվող տաք կերակուրներ, և/կամ աշակերտների կողմից տևից բերված սնունդ:
  - Անհրաժեշտության դեպքում պետք է տեղադրվեն ֆիզիկական պատնեշներ՝ սահմանափակելու ճաշարանի աշխատակիցների և աշակերտների միջև շփումը:
  - Լրացուցիչ (ընտրովի) —Նկարագրել այլ միջոցառումներ՝ \_\_\_\_\_

**D. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- ☐ Նախքան դպրոցի սկսվելը՝ անհրաժեշտ է տեղեկատվություն ուղարկել ծնողներին և աշակերտներին դպրոցի գործունեության ծրագրի վերաբերյալ (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Մեկուսացման և կարանտինի կարգադրություններ, քանի որ դրանք կիրառվում են այն աշակերտների նկատմամբ, որոնք ախտանիշներ ունեն կամ հնարավոր է շփվել են COVID-19-ով վարակվածի անձի հետ \_\_\_\_\_

- COVID-19-ի թեստավորման հնարավորություններ, եթե աշակերտը կամ ընտանիքի անդամը ախտանիշներ ունի կամ շփվել է COVID-19-ով վարակված անձի հետ: \_\_\_\_\_
- Դպրոցում ում դիմել, եթե աշակերտը ախտանիշներ ունի կամ հնարավոր է՝ վարակվել է \_\_\_\_\_
- Ինչպես իրականացնել ախտանիշների ստուգում՝ մինչ աշակերտի տևից դուս գալը \_\_\_\_\_
- **Դիմակների** կիրառման պահանջ \_\_\_\_\_
- Աշակերտների կողմից ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի վերահսկման կարգադրություններին հետևելու կարևորությունը \_\_\_\_\_
- Փոփոխություններ ակադեմիական և արտադպրոցական ծրագրի մեջ՝ վտանգները կանխելու նպատակով \_\_\_\_\_
- Փոփոխություններ դպրոցական մենդի ծրագրում՝ վտանգները կանխելու նպատակով \_\_\_\_\_
- Դպրոցի գործունեության ծրագրերը՝ ծնողների դպրոց այցելությունների վերաբերյալ և խորհուրդներ՝ դպրոցի հետ հեռավար կապ հաստատելու վերաբերյալ \_\_\_\_\_
- Շտապ իրավիճակներում դպրոցի կողմից կապ հաստատելու համար թարմ տվյալների տրամադրման կարևորությունը, ներառյալ՝ բազմաթիվ ծնողների հետ կապ հաստատելու տարբերակները \_\_\_\_\_
- Այլ. \_\_\_\_\_

- Այս արձանագրության կրկնօրինակը պետք է փակցվի դպրոցի բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Ամբողջ դպրոցում պետք է փակցվեն նշաններ, որոնք անձնակազմին և աշակերտներին կհիշեցնեն ֆիզիկական հեռավորության պահպանման, **դիմակներ** կրելու և ձեռքերը լվանալու կարևորության մասին:
- Դպրոցի բոլոր հանրային մուտքերի մոտ պետք է փակցվեն նշաններ, որոնք այցելուներին կտեղեկացնեն, որ նրանք չպետք է հաստատություն մտնեն, եթե COVID-19-ի ախտանիշներ ունեն:
- Դպրոցը պետք է մշակի և շրջանառության մեջ դնի հաղորդակցման ծրագիր այն դեպքում, եթե պահանջվի դպրոցի մասնակի կամ ամբողջական փակում՝ COVID-19-ով խմբային վարակման դեպքերի կապակցությամբ:
- Հաստատության առցանց հարթակները (վեբ կայք, սոցիալական ցանցեր) պետք է հստակ տեղեկություններ տրամադրեն շենքի աշխատանքային ժամերի, այցելությունների կանոնադրության, ակադեմիական և արտադպրոցական ծրագրերի փոփոխությունների և **դիմակներ** կրելու, ֆիզիկական հեռավորություն պահպանելու և ձեռքերը լվանալու վերաբերյալ:
- Հաստատության առցանց կետերը պետք է հրահանգներ տան աշակերտներին, ծնողներին և ուսուցիչներին, թե ինչպես կապ հաստատել դպրոցի հետ՝ վարակման կամ վարակի հետ շփվելու դեպքերում:

**E. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՅՈՎՈՒՄ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

- Մշակվել է Անհատականացված Կրթական Ծրագրերի (IEPs) և հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նախատեսված 504 Ծրագրերի թարմացման նախագիծ՝ ապահովելու, որ կրթությունը շարունակվի՝ առանց աշակերտի համար անհարկի վտանգի:

- Այս նախագիծը ներառում է ուսումնական տարվա սկզբին ծնողների հետ ակտիվ շփման մեթոդ՝ ապահովելու, որ երեխայի կրթության և անվտանգության հետ կապված հարցերը լուծված լինեն:
- Անհատական IEPs-երի և 504 ծրագրերի փոփոխությունները կարող են ներառել հեռավար ուսուցում, դասասենյակների փոփոխություններ՝ հարմարեցնելով երեխաների կարիքներին, հաճախում դպրոց՝ առանձնացված տարածքում քիչ թվով աշակերտների հետ, կամ միաձուլված (հիբրիդային) մոտեցում՝ կրթությունը համատեղելով դասարաններում, ինչպես նաև հեռավար ուսուցման տարբերակով իրականացման համար:
- IEPs-երի և 504 ծրագրերի ձևափոխման քայլերը, որոնց նպատակն է ապահովել աշակերտների անվտանգությունը, պետք է համապատասխանեն նահանգային և պետական օրենքներին:

Վարչական ծառայությունները կամ գործառնությունները, որոնք կարելի է առաջարկել հեռավար կարգով (օր՝ տվյալ առարկայի համար գրանցում, ձևաթղթի հանձնում և այլն) տեղափոխվել են առցանց:

**Վերոհիշյալ միջոցառումներում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառումներ պետք է նշվեն առանձին էջերում, որը բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:**

**Բիզնեսի**

**կոնտակտի  
անուն՝**

**Ջեռախոսահամար**

**Վերջին  
վերանայման  
ամսաթիվ՝**

---

---

---

---